

Հաստատված է՝

«Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական
լեզվահասարակագիտական համալսարան»

հիմնադրամի գիտական խորհրդի

15.03.2019 թ. № 9 նիստի որոշմամբ

ԵՊԼՀ ռեկտոր, գիտական խորհրդի նախագահ՝

Վ. Վ. Հարությունյան



ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

**«ԵՐԵՎԱՆԻ Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԼԵԶՎԱՀԱՍԱՐԱԿԱԳԻՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՊԵՐԻ ԵՎ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ
ԲԱԺՆԻ**

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հանրային կապերի և լրատվության բաժինը (այսուհետ՝ Բաժին) «Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ ԵՊԼՀ) կառուցվածքային ստորաբաժանում է, որը գործում է Հայաստանի Հանրապետության օրենսդրության, ԵՊԼՀ-ի կանոնադրության ու սույն կանոնադրության հիման վրա:
2. Բաժինը ստեղծվում, վերակազմակերպվում կամ լուծարվում է ԵՊԼՀ-ի կանոնադրությանը համապատասխան:
3. Սույն կանոնադրությունը կարող է լրացվել կամ փոփոխվել ԵՊԼՀ-ի գիտական խորհրդի որոշմամբ:

II. ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

4. Բաժնի նպատակն է նպաստել ԵՊԼՀ վերաբերյալ դրական հանրային կարծիքի և վարկանիշի ձևավորմանը և ապահովել ԵՊԼՀ-ի տեղեկատվության տարածմանը:

5. Բաժնի գործառույթներն են՝

- 1) պլանավորել, կազմակերպել, համակարգել և մշտադիտարկել ՁԼՄ-ների, ՀԿ-ների և այլ շահագրգիռ կազմակերպությունների հետ ԵՊԼՀ տեղեկատվության փոխանակման և համագործակցության գործընթացները,
- 2) վերլուծել լրատվամիջոցներում ԵՊԼՀ-ի, կրթության և գիտության ոլորտների խնդիրների մասին հրապարակված և հեռարձակված նյութերը, ներկայացնել դրանք ԵՊԼՀ-ի ղեկավարությանը և ապահովել համապատասխան ընթացք,
- 3) մասնագիտական աշխատանքներ կատարել համալսարանի մասին հանրային կարծիքի ու դրական վարկանիշի ձևավորման ուղղությամբ,
- 4) նպաստել ԵՊԼՀ-ի տեղեկատվության տարածման աշխատանքներին և տպագիր նյութերի մշակմանը (պաշտոնաթերթ, տեղեկատվական թերթիկներ, գրքույկներ, բացիկներ և այլ նյութեր),
- 5) ապահովել ԵՊԼՀ-ի համացանցային կայքի բովանդակային թարմացումը և առցանց հետադարձ կապը,
- 6) ստեղծել և տարածել ԵՊԼՀ-ի մասին տեսաձայնագրություններ,
- 7) իրականացնել տպագիր և էլեկտրոնային նյութերի արխիվացումը:

III. ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

6. Բաժնի աշխատանքները համակարգվում են ռեկտորի կողմից:

7. Բաժնի հաստիքացուցակը հաստատում և դրա մեջ փոփոխություններ է կատարում ԵՊԼՀ-ի հոգաբարձուների խորհուրդը:

8. Բաժինը գլխավորում է բաժնի պետը, որին նշանակում և պաշտոնից ազատում է ռեկտորը:

9. Բաժնի պետը իրականացնում է հետևյալ գործառույթները՝

- 1) աշխատանքների ղեկավարում,
- 2) ԵՊԼՀ-ի հոգաբարձուների խորհրդում, գիտական խորհրդում, ռեկտորատում, հանրային կապերին և լրատվությանը վերաբերող հարցերի նախապատրաստում և ներկայացում,
- 3) հանրային կապերի և ՁԼՄ-ների հետ աշխատանքներին առնչվող ԵՊԼՀ-ի ֆակուլտետների և կառուցվածքային այլ ստորաբաժանումների կողմից տարվող աշխատանքների համակարգում: